

ԲԱՊՐՈՒՄ ԵՆԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԻՆՆԵՐԻ

(Հարցալույց կապի մինիստրության ռադիոեղեգային գծի և ռետրանսլացիոն հեռուստատեսային կայանի դիրնկցիայի պետ Ն. Ա. ԱՎՊԱՅԱՆԻ հետ)

Ութ տարի առաջ Երևանում փայլեց առաջին կապույտ էկրանը, կենտրոնական ունիվերսալ գուցափեղկում դրված գործող հեռուստացույցի առջև հավաքվեց անհամբեր երևանցիների առաջին բավմությունն ու Նարքի սարալանջին, 180 մետր բարձրության վրա վառվող կարմիր լույսերն ի լուր բոլորի հայտարարեցին՝ Հայաստանն ունի իր հեռուստատեսությունը: Այդ նորամուծությանը շուտով վարժվեցին, հաղորդման տեխնիկայի վերջին խոսքերից մեկը շատ արագ մտավ կենցաղի մեջ, ու այսօր երևանյան աշտարակի ճառագայթած ալիքներն ընդունում է ավելի քան 100 000 հեռուստացույց: Այդուհանդերձ, մեր անհարթ, լեռնաշատ ռեսպուբլիկայի շատ անկյուններ այսօր էլ դեռ չեն զրկված են հեռուստատեսային հաղորդումներ ընդունելու հնարավորությունից, ռադիոեղեգային ընդհանուր գծի և ռետրանսլացիայի բացակայության պատճառով: Այսօր: Իսկ վա՞ղը...

Այս փոքրիկ նախաբանից հետո Ն. Ավդալյանը սեղանին է փռում ծավալուն մի գծագիր ու մոտ հրավիրում.

— Ուրախությամբ ասենք, որ սա արդեն մեծ մասամբ իրագործված ծրագիր-գծագիր է: Մեկ-երկու տարի առաջ այն սուկ գաղափար էր, իսկ օրերս մենք հաղորդումներ ընդունեցինք Սեմյոնովկայի լեռնանցքում: Պատրաստ է և՛ հեռուստատեսային կայանը, և՛ ռադիոեղեգային գիծը, այնպես որ շուտով Սևանի ավազանում մարդիկ կարող են պտտել ընդունիչների բռնակները: Սեմյոնովկայում մենք ունենք 180 մետրանոց աշտարակ, դա № 4 կայանն է: № 2-ը դարձյալ 180 մետր բարձրությամբ, դուք տեսնում եք Պուշկինի լեռնանցքի բարձրակետին: Այստեղ ևս

սխառաստ է կայանը, սակայն դեռ ռադիոռելեային գծի չի անցկացված: Կունենանք 38 մետրանոց ևս 3 աշտարակ: Այսպես ասած, երկրաչափական տեսողությունն ապահովված է:

— Եվ կարող ենք համարել, որ մեր հեռուստատեսային ալիքները կհասնեն Թբիլիսի ու հակառակը:

— Դա իր հերթին: Անշուշտ, վերջնական նպատակը Թբիլիսին չէ, այլ Մոսկվան: Մեր, ապա Թբիլիսի-Սոչի, ավելի ճիշտ՝ արդեն Բուքարյիսի-Սոչի ռադիոռելեային գծի ավարտումից հետո մեր աշտարակների «հասցեատերերի» թիվը շատ չատ է ավելանում:

— Դա միաժամանակ հնարավոր կդարձնի՝ արտասահմանյան հեռուստակենտրոնների ալիքները որսալ:

— Գործնականում առայժմ հնարավոր է փոխընդունման երեք ցիկլ: Եթե մոսկովյան կենտրոնը կատարի առաջինը, մենք այդ հնարավորությունն այս կամ այն կերպ կունենանք:

— Աղավաղումներ, խանգարումներ, ինչ խոսք, միանգամայն հնարավոր են: Իսկ մեր ռեսպուբլիկայի համեմատաբար ոչ մեծ շառավղում դրանք նույնպե՛ս սպասվում են:

— Առաջին դեպքում մենք շատ բծախնդիր չպետք է լինենք: Իսկ ինչ վերաբերում է ավելի փոքր շառավղին, ապա այստեղ մենք այլ պատկեր ենք տեսնում: Մեր տերիտորիալում ընդունող-հաղորդող 180 մետրանոց երեք աշտարակներն էլ ունեն նույն հզորությունը՝ 5 կիլովատանոց ռետրանսլյատորներ: Երևանի կենտրոնինը հայրենական արտադրության մեր առաջին ապարատուրաներից մեկն է: Սեմյոնովկայի ու Պուշկինի լեռնանցքերում տեղադրված է Չեխոսլովակյան նույնատիպ ապարատուրա, որը սակայն առավել կատարյալ է: Արդեն գործող կենտրոնում՝ Երևանում, ընդունման մուտքում տողերի խտությունը 600 է, ելքում այն «աղբատանում», դառնում է 450: Մյուս երկու կենտրոնում մուտքը նույնն է, իսկ ելքը՝ 550 տող: Այս դեպքում որակը մեզ չի անհանգստացնում, այն բավարար է, բարձր:

— Բացի իրենց հիմնական ծառայությունից, աշտարակներն այլ նպատակի կծառայեն:

— Բացի հեռուստապղանշաններից, աշտարակները կօգտագործվեն նաև հեռախոսային կապի համար: Երևան—Թբիլիսի և հակառակը կապը ավելանում է մոտ 60 կետով: Հատուկ կանալ կա, որն իրականացնում է նաև սիգնալիկացիան ու ծառայողական կապը:

— Տեխնիկական ինչ առանձնահատկություններով էր պայմանավորված, եթե կարելի է այսպես անվանել, այդ աշտարակաշինությունը:

— 2 —

8042-64



1972-Ա.Է.

— Բավականին բարդ: Հայաստանում բարձր հաճախականությունների նման տեխնիկա դեռևս չէինք ունեցել: Սպեկտրը հասնում է մինչև 2000 մեգահերց հաճախականության: Նման ապարատուրա առաջին անգամ է գործելու մեկ մոտ: Ուրեմն, եկեք հաշվի առնենք և՛ տեղադրման, և՛ մոնտաժի, և՛ յուրացման ասպարեպի բոլոր անսովորություններն ու բարդությունները: Բացի այդ, օգտագործվում են անտենային հատուկ սիստեմներ, որոնց շնորհիվ էլեկտրամագնիսական էներգիան հաղորդվում է շատ նեղ, սեղմ (3° անկյուն) ճառագայթափնջով: Սա հիմնական պահանջն է, որը միաժամանակ ընձեռում է նոր հնարավորություններ՝ զուգահեռ կամ միմյանց հատող միևնույն հաճախականության ռադիոռելեային մի քանի գծերի թողարկում:

Կռահելով ձեր ամազգրին հետաքրքրող հաջորդ հարցը, որն անկասկած կվերաբերի շինարարական աշխատանքներին, կասեմ հետևյալը. շինարարությունն իրականացվել է անսովոր բարդ պայմաններում: Ինքնեղ պատկերացրեք՝ Սեմյոնովկայի բարձրությունն է 2400 մետր, Պուշկինի լեռնանցքինը՝ 2100 մետր: Ձմռան ամիսներին համարյա ոչինչ անել հնարավոր չէր. խանգարում էին բուրբ, փակ ճանապարհները, հաճախ ճանապարհների խպառ բացակայությունը: Շինարարները աշխատում էին հերոսաբար: Շինարարությունն իրականացրել և շարունակում են այդ գործը հիմնականում երեք կազմակերպություններ: «Ռադիոստորյ-սրեաոի» № 170 շինմոնտաժային վարչությանն է հանձնարարված ծառայողական և մյուս շենքերի շինարարությունը, «Յուժտալկոնստրուկցիա» (Ռոստով) կազմակերպության ներկայացուցիչները հենց ձեր սասած աշտարակաշինարարներն են, իսկ համամիութենական 305 շինմոնտաժային վարչությունն իրականացրել է ասպարատուրայի մոնտաժումը, տեղադրումն ու լարումը: Հատկապես վերջին երկու կազմակերպությունները ամենայն բարեխղճությամբ ու ժամկետների խիստ պահպանումով շատ-շատ են նպաստել գործի բարեհաջող ընթացքին:

— Եւտով Հայաստանը կարելի կլինի՞ համարել համատարած հեռուստատեսության ռեսպուբլիկա:

— Առայժմ՝ ոչ: Իսկ եթե փորը-ինչ ձգենք այդ «շուտով» հասկացողությունը ու նկատի ունենանք, որ մյուս տարվանից կսկսվի ռադիոռելեային գծի անցկացումը նաև Ջանգեկուրի ուղղությամբ, ապա մեկ-երկու տարի անց լեռնային այդ անմատչելի համարված շրջանը նույնպես կգումարվի ընդհանուր ցանցին: Մինչև Ջանգեկուր նախատեսված է կառուցել ընդունող-հաղորդող ևս 6 կետ: Դրանք շահագործման հանձնելուց հետո՝ մեր շառավիղն ավելի համապարփակ կլինի ու ռեսպուբլիկայի բոլոր անկյուններում կառկայծեն կապույտ էկրանները:

Քիչ ժամանակ է մնացել սպասելու: Հուսանք, որ ամեն ինչ կատարայ ու ժամկետին կլինի:

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ